

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ, 01.10.2015



Մի րեւի հայրենակիցներ:

Սրտանց շնորհավորում եմ բոլորիս Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ: Մեծ երջանկություն է ապրել կյանքի փիլիսոփայությամբ հարստացած, իրենց աշխատանքով և արարումով մեզ շահած-պահած, ծերության շրջանին հասած մեր հարազատների կողքին և դասեր առնել նրանց փորձից, ստանալ նրանց օրհնությունը: Մակայն առավել մեծ երջանկություն է նրանց նկատմամբ սեր և հոգատար վերաբերմունք հանդես բերելը, առավել տկարներին խնամելը, ինչպես նրանք են մեզ խնամել, երբ մենք ունեինք դրա կարիքը:

Համոզված եմ, որ յուրաքանչյուր ոք հենց նման վերաբերմունք է դրսևորում, որովհետև հայ ազգը դարեր ի վեր ակնածանք է տաձել ծերերի նկատմամբ, սիրո ու երախտագիտության դրսևորումներով շրջապատել ավագ սերնդի ներկայացուցիչներին:

Կրկին շնորհավորում եմ մարզի ծերունագարդ տատիկներին ու պապիկներին Տարեցների միջազգային օրվա առթիվ:

Մաղթում եմ առողջություն և բարօրություն, սեր և հոգածություն: